Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի
2025 թվականի օգոստոսի 25-ի նիստի թիվ 1 արձանագրություն

Նիստի բացումից առաջ Ուսանողական խորհրդի նախագահ Լ. Մանուկյանը ներկայացրեց նիստի նպատակն ու քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատվեց:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Առաջին կուրսեցիների հետ հանդիպումների կազմակերպման մասին:
2. Ամենամյա «Բարև, մենք ենք» միջոցառման կազմակերպչական աշխատանքների իրականացման մասին:
3. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում Ուսուցչի տոնին նվիրված միջոցառման կազմակերպման մասին:
4. Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում ՀՀ Անկախության 34-րդ տարեդարձին նվիրված միջոցառման կազմակերպման մասին:
5. Նոր ուսումնական տարվա ֆակուլտետային միջոցառումների ծրագրերի հաստատման մասին:
6. Ընթացիկ հարցերի մասին:

1. Լսեցին-Լ. Մանուկյանի տեղեկատվությունը առաջին կուրսեցիների հետ հանդիպումների կազմակերպման վերաբերյալ, որի նպատակն է 1-ին կուրս ընդունված ուսանողներին ծանոթացնել համալսարանի կառուցվածքին, ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ մասնավորապեսՈւսանողական խորհրդի գործունեությանը:

Արտահայտվեցին-Մասնակիցներն առաջարկեցին հանդիպումները կազմակերպել ինտերակտիվ ձևաչափով՝ ներառելով հարցուպատասխան փուլ և ավագ կուրսերի ուսանողների մասնակցություն:

Որոշեցին-Կազմակերպել հանդիպումներ երկու ֆակուլտետներում՝ ապահովելով ուսանողների ակտիվ և արդյունավետ ներգրավվածություն:

2. Լսեցին-Լ. Մանուկյանի զեկույցը ամենամյա «Բարև, մենք ենք» միջոցառման կազմակերպման վերաբերյալ:

Արտահայտվեցին-Առաջարկվեց ձևավորել աշխատանքային խումբ, մշակել միջոցառման սցենար և ապահովել բազմաբովանդակ ծրագիր՝ ներառելով մշակութային ելույթներ:

Որոշեցին-Սկսել նախապատրաստական աշխատանքները, ձևավորել աշխատանքային խումբ և հստակեցնել պատասխանատուների պարտականություններն ու ժամկետները:

3. Լսեցին-Լ. Մանուկյանի զեկույցը Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում Ուսուցչի տոնին նվիրված միջոցառման կազմակերպման վերաբերյալ:

Արտահայտվեցին-Առաջարկվեց միջոցառումն անցկացնել հանդիսավոր ձևաչափով՝ ներառելով ուսանողական ստեղծագործական ելույթներ և դասախոսական կազմի ներգրավում:

Որոշեցին-Կազմակերպել միջոցառում բարձր մակարդակով՝ նախապես մշակելով սցենար և նշանակելով պատասխանատուներ:

4. Լսեցին-Լ. Մանուկյանի զեկույցը ՀՀ Անկախության 34-րդ տարեդարձին նվիրված միջոցառման վերաբերյալ:

Արտահայտվեցին-Մասնակիցները կարևորեցին միջոցառման հայրենասիրական նշանակությունը և առաջարկեցին այն իրականացնել մշակութային հագեցված ծրագրով:

Որոշեցին-Կազմակերպել միջոցառում Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում՝ ապահովելով ուսանողների լայն ներգրավվածություն և սցենարային ամբողջականություն:

5. Լսեցին-Նոր ուսումնական տարվա միջոցառումների ծրագրերի ներկայացումը Լ. Մանուկյանի կողմից:

Արտահայտվեցին-Առաջարկվեց կատարել լրացումներ և ճշգրտումներ՝ ծրագրերը դարձնելով ավելի արդյունավետ և ուսանողակենտրոն:

Որոշեցին-Հաստատել ծրագրերը՝ հաշվի առնելով առաջարկված փոփոխությունները և ապահովել դրանց իրականացման վերահսկողությունը:

Նախագահ՝ Լ. Մանուկյան

Քարտուղար՝ Լ. Ավետիսյան

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի և ուսանողական խորհրդի հետ համատեղ 2025 թվականի դեկտեմբերի 18-ին կայացած նիստի արձանագրություն թիվ 2

Նախքան խորհրդի նիստի բացումը Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյանը ներկայացրեց նիստի նպատակը և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. **«Գավառի պետական համալսարանում որակի ապահովման քաղաքականության հիմունքներ»-ի ներկայացում և քննարկում:**

/զեկ. Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյանը /

1 **Լսեցին** - Օրակարգային հարցի վերաբերյալ զեկուցմամբ հանդես եկավ Գավառի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյանը, ով ներկայացրեց ԳՊՀ-ի որակի ապահովման քաղաքականության հիմնական դրույթները, նպատակները, սկզբունքներն ու դրանց իրականացման մեխանիզմները:

Զեկուցողը նշեց, որ որակի ապահովումը համալսարանի գործունեության կարևորագույն բաղադրիչներից է, որի նպատակն է բարձրացնել կրթական ծրագրերի արդյունավետությունը, ապահովել ուսուցման և ուսումնառության բարձր որակ, խթանել գիտահետազոտական գործունեությունը և նպաստել համալսարանի շարունակական զարգացմանը:

Ք. Հայրապետյանը մանրամասն անդրադարձավ ԳՊՀ որակի ապահովման քաղաքականության հիմնարար սկզբունքներին՝ ընդգծելով թափանցիկության, հաշվետվողականության, մասնակցայնության, շարունակական բարելավման և շահակիցների ներգրավվածության կարևորությունը: Նա նշեց, որ կրթության որակի ապահովման գործընթացում առանցքային դեր ունեն ոչ միայն վարչական և

ակադեմիական անձնակազմը, այլև ուսանողները, շրջանավարտները և գործատուները:

Զեկուցման ընթացքում ներկայացվեցին կրթական ծրագրերի պարբերական վերանայման և բարելավման գործընթացները, դասավանդման արդյունավետության գնահատման մեխանիզմները, ուսանողների կարծիքների ուսումնասիրման և վերլուծության եղանակները, ինչպես նաև կրթական արդյունքների գնահատման չափանիշները:

Արտահայտվեցին-Քննարկման ընթացքում նիստի մասնակիցները հետաքրքրվեցին ուսանողների մասնակցության ձևաչափերով, կրթական ծրագրերի որակի գնահատման գործիքներով և համալսարանի ռազմավարական զարգացման գործընթացներում ուսանողների դերի վերաբերյալ հարցերով:

Նշվեց, որ ուսանողների կարծիքը կարևոր դեր ունի որոշումների կայացման և կրթական միջավայրի բարելավման գործընթացում, ինչի համար պարբերաբար իրականացվում են հարցումներ, քննարկումներ և հետադարձ կապի այլ միջոցառումներ:

Մասնակիցները կարևորեցին որակի մշակույթի ձևավորումը համալսարանում՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր ուսանող և աշխատակից պետք է գիտակցի իր պատասխանատվությունը կրթության որակի բարձրացման գործում: Արձանագրվեց նաև, որ որակի ապահովման համակարգի արդյունավետ գործունեությունը նպաստում է համալսարանի մրցունակության բարձրացմանը և կրթական ծառայությունների շարունակական կատարելագործմանը:

Որոշեցին

1. Ի գիտություն ընդունել «Գավառի պետական համալսարանի որակի ապահովման քաղաքականության հիմունքներ»-ի վերաբերյալ ներկայացված զեկույցը:
2. Կարևորել համալսարանում որակի ապահովման մշակույթի շարունակական զարգացումը և ուսանողների ակտիվ ներգրավվածությունը այդ գործընթացներում:
3. Աջակցել Որակի ապահովման բաժնի կողմից իրականացվող ծրագրերին և նախաձեռնություններին՝ ուղղված կրթության որակի բարձրացմանը:
4. Խրախուսել ուսանողների մասնակցությունը կրթական ծրագրերի գնահատման, հարցումների և հետադարձ կապի ապահովման գործընթացներին:

5. Առաջարկել ֆակուլտետային ուսանողական խորհուրդներին պարբերաբար կազմակերպել իրազեկման հանդիպումներ՝ որակի ապահովման համակարգի և դրա գործառույթների վերաբերյալ:

6. Հանձնարարել Ուսանողական խորհրդի անդամներին աջակցել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածմանը ուսանողական լայն շրջանակներում:

Նախագահ՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Լ. Մանուկյան**

Գավառի պետական համալսարանի

2025 թվականի դեկտեմբերի 24-ին կայացած ուսանողական խորհրդի նիստի

թիվ 3 արձանագրություն

Նիստի բացումից առաջ Ուսանողական խորհրդի նախագահ Լ. Մանուկյանը ներկայացրեց նիստի նպատակն ու քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատվեց:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում «Հայոց լեզուն տունն է հայուն» խորագրով միջոցառման կազմակերպման մասին:
2. «Կյանքի հոգևոր, քնարական ընկալումները» խորագրով գրական հանդիպման կազմակերպչական աշխատանքների մասին:
3. Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում կազմակերպվող ցերեկույթի կազմակերպման մասին:
4. Համալսարանի գրադարանի հետ համատեղ «Վարպետ գրողն ու երգահանը» խորագրով միջոցառման կազմակերպման մասին:
5. «Մոր և կնոջ կերպարը հայ գրականության մեջ» խորագրով ցերեկույթի կազմակերպման մասին:
6. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում Ֆրանկոֆոնիան և ֆրանսիական մշակույթը ներկայացնող ուսուցողական միջոցառման կազմակերպման մասին:
7. Ընթացիկ հարցերի մասին:

1 **Լսեցին**-Լ. Մանուկյանի ներկայացումը Մայրենիի տոնին նվիրված «Հայոց լեզուն տունն է հայուն» խորագրով միջոցառման վերաբերյալ՝ ներառելով ծրագրի նպատակներն ու կազմակերպչական աշխատանքների ընթացքը:

Արտահայտվեցին – Մասնակիցները կարևորեցին միջոցառման կազմակերպման անհրաժեշտությունը՝ որպես մայրենի լեզվի արժևորման և ուսանողների հայրենասիրական դաստիարակության խթանման միջոց: Առաջարկվեց ապահովել

ուսանողների լայն ներգրավվածություն և ակտիվ մասնակցություն միջոցառման բոլոր փուլերում:

Որոշեցին - Միջոցառումն անցկացնել փետրվարի 21-ին: Ձևավորել աշխատանքային խումբ՝ միջոցառման նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու համար: Ապահովել ուսանողների ակտիվ մասնակցությունը:

2. **Լսեցին**- 2-րդ հարցի վերաբերյալ՝ Լ. Մանուկյանը ներկայացրեց «Կյանքի հոգևոր, քնարական ընկալումները» խորագրով գրական հանդիպման կազմակերպման առաջարկները:

Արտահայտվեցին – Մասնակիցները քննարկեցին միջոցառման կազմակերպման նպատակահարմարությունը, ձևաչափը և առաջարկեցին հստակեցնել հյուրերի կազմը, ինչպես նաև ապահովել միջոցառման բովանդակային հագեցվածությունը:

Որոշեցին - Շարունակել կազմակերպչական աշխատանքները: Հստակեցնել հանդիպման հյուրերի կազմը, անցկացման վայրն ու ժամկետները: Կազմել միջոցառման սցենարն ու աշխատանքային պլանը:

3. **Լսեցին** - Ն. Գրիգորյանը ներկայացրեց Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում կազմակերպվող ցերեկույթի նախապատրաստական աշխատանքները:

Արտահայտվեցին –Ուսանողական խորհրդի անդամները ընդգծեցին միջոցառման կարևորությունը և պատրաստակամություն հայտնեցին աջակցելու կազմակերպչական աշխատանքներին:

Որոշեցին - Հաստատել ցերեկույթի անցկացման առաջարկվող ծրագիրը: Ներգրավել ֆակուլտետի ուսանողներին միջոցառման կազմակերպման և անցկացման գործընթացում: Ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանները:

4. **Լսեցին** - Լ. Մանուկյանը ներկայացրեց համալսարանի գրադարանի հետ համատեղ կազմակերպվող «Վարպետ գրողն ու երգահանը» խորագրով միջոցառման կազմակերպչական հարցերը:

Արտահայտվեցին – Մասնակիցները, ընդգծելով «Վարպետ գրողն ու երգահանը» խորագրով միջոցառման կրթամշակութային արժեքը, կարևորեցին համալսարանի գրադարանի հետ համագործակցության ընդլայնումը և պատրաստակամություն

հայտնեցին աջակցելու կազմակերպչական ու տեղեկատվական աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Որոշեցին - Շարունակել համագործակցությունը համալսարանի գրադարանի հետ և հաստատել միջոցառման կազմակերպման ժամանակացույցը: Իրականացնել տեղեկատվական և գովազդային աշխատանքներ:

5. Լսեցին - 5-րդ հարցի վերաբերյալ՝ Ն. Գրիգորյանը ներկայացրեց «Մոր և կնոջ կերպարը հայ գրականության մեջ» խորագրով ցերեկույթի կազմակերպչական հարցերը:

Արտահայտվեցին – Ուսանողները ներկայացրեցին առաջարկություններ ծրագրի բովանդակային հարստացման վերաբերյալ և պատրաստակամություն հայտնեցին աջակցելու միջոցառման կազմակերպչական աշխատանքներին:

Որոշեցին - Հաստատել ցերեկույթի թեմատիկ ուղղվածությունն ու ծրագիրը: Ներգրավել ուսանողներին զեկուցումներով, գեղարվեստական ելույթներով և ներկայացումներով: Ավարտին կազմակերպել թեմային համապատասխան մշակութային հատված:

6. Լսեցին - Ա. Մանուկյանը ներկայացրեց Ֆրանկոֆոնիան և ֆրանսիական մշակույթը ներկայացնող ուսուցողական միջոցառման ծրագիրը:

Արտահայտվեցին – Ուսանողները ներկայացրեցին առաջարկություններ միջոցառման ծրագրի բովանդակության հարստացման, ուսանողական զեկուցումների թեմաների հստակեցման, ինչպես նաև ցուցադրությունների և ներկայացումների կազմակերպման ձևաչափերի վերաբերյալ: Քննարկվեց նաև տեխնիկական և կազմակերպչական հարցերի արդյունավետ լուծման անհրաժեշտությունը:

Որոշեցին - Կազմակերպել ուսուցողական միջոցառում՝ ուղղված ֆրանսիական լեզվի և մշակույթի հանրահռչակմանը: Ապահովել ուսանողների լայն մասնակցությունը: Նախատեսել թեմային համապատասխան ցուցադրություններ և ներկայացումներ:

Նախագահ՝ Լ. Մանուկյան

Քարտուղար՝ Լ. Ավետիսյան

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի և ուսանողական խորհրդի հետ համատեղ 2026 թվականի փետրվարի 22-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրություն

Նախքան խորհրդի նիստի բացումը Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյանը ներկայացրեց նիստի նպատակը և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. «Գավառի պետական համալսարանում ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության գնահատման» և «Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման» հարցաթերթերի քննարկում:

/զեկ. Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան/

1. **Լսեցին** - Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյանը ներկայացրեց ուսանողների բավարարվածության ամենամյա գնահատման գործընթացի կարևորությունը, նպատակներն ու ակնկալվող արդյունքները:

Զեկուցողը նշեց, որ ուսանողների բավարարվածության գնահատումը հանդիսանում է ԳՊՀ ներքին որակի ապահովման համակարգի կարևոր բաղադրիչներից մեկը, որի միջոցով հնարավոր է բացահայտել կրթական գործընթացի ուժեղ և բարելավման կարիք ունեցող կողմերը, ստանալ ուսանողների կարծիքն ու առաջարկությունները և դրանց հիման վրա իրականացնել համապատասխան բարելավումներ:

Ք. Հայրապետյանը ներկայացրեց քննարկման դրված առաջին փաստաթուղթը՝ «Գավառի պետական համալսարանում ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթ» - ը: Նա մանրամասն անդրադարձավ հարցաթերթի կառուցվածքին և ընդգծեց, որ այն ներառում է հարցեր՝ կապված համալսարանի գրադարանային ծառայությունների, էլեկտրոնային ռեսուրսների, լսարանների, տեխնիկական միջոցների, ինտերնետային հասանելիության, ուսումնամեթոդական նյութերի և ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ այլ ռեսուրսների հետ:

Նշվեց, որ հարցաթերթի նպատակն է պարզել ուսանողների բավարարվածության աստիճանը կրթական միջավայրի և ուսուցման համար ստեղծված պայմանների նկատմամբ, ինչպես նաև հավաքագրել առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

Այնուհետև ներկայացվեց երկրորդ փաստաթուղթը՝ «Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցաթերթ» - ը: Զեկուցողը նշեց, որ հարցաթերթը հնարավորություն է տալիս գնահատելու դասախոսների մասնագիտական և մանկավարժական կարողությունները, դասավանդման մեթոդների արդյունավետությունը, ուսանողների հետ հաղորդակցության մակարդակը, դասերի կազմակերպման որակը, գնահատման համակարգի թափանցիկությունն ու արդարությունը, ինչպես նաև ուսումնական գործընթացի ընդհանուր արդյունավետությունը:

Արտահայտվեցին - Քննարկման ընթացքում առանձնահատուկ շեշտվեց, որ հարցաթերթերում ներառված հարցերը մշակվել են՝ հաշվի առնելով կրթության որակի ապահովման ժամանակակից պահանջները և նախորդ տարիների փորձը: Նշվեց, որ հարցումների արդյունքները ծառայելու են ոչ միայն վիճակագրական տվյալների հավաքագրմանը, այլև գործնական որոշումների կայացմանը՝ ուղղված կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Նիստի մասնակիցները հանդես եկան մի շարք առաջարկություններով: Մասնավորապես, առաջարկվեց հարցաթերթերում ընդգրկել ուսանողների ազատ կարծիքի արտահայտման համար նախատեսված լրացուցիչ բաց հարցեր, ընդլայնել ուսումնական միջավայրի վերաբերյալ գնահատվող ցուցանիշների շրջանակը, ինչպես նաև ապահովել հարցումների արդյունքների ամփոփ ներկայացումը ուսանողական համայնքին:

Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ ուսանողների կարծիքը կարևոր դեր ունի համալսարանի գործունեության կատարելագործման և որակի մշակույթի ձևավորման գործընթացում: Նշվեց նաև, որ հարցումների անցկացումը պետք է իրականացվի առավելագույն թափանցիկությամբ՝ ապահովելով պատասխանների գաղտնիությունն ու օբյեկտիվությունը:

Մասնակիցները բարձր գնահատեցին ներկայացված փաստաթղթերի բովանդակությունն ու կառուցվածքը և կարևորեցին դրանց պարբերական վերանայման անհրաժեշտությունը՝ կրթական միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով:

Որոշեցին.

1. «Գավառի պետական համալսարանում ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության գնահատման» և «Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման» հարցաթերթերը ներկայացնել Որակի ապահովման բաժնի նիստի հաստատմանը:

2. Աջակցել ուսանողների շրջանում հարցման գործընթացների արդյունավետ իրականացմանը:

3⊠Կարևորել ուսանողների կողմից ներկայացված առաջարկությունների և դիտարկումների հաշվառումը համալսարանի կրթական և կազմակերպչական գործընթացների կատարելագործման ընթացքում:

Նախագահ՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Լ. Մանուկյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի և ուսանողական խորհրդի հետ համատեղ 2026 թվականի ապրիլիի 30-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրություն

Նախքան խորհրդի նիստի բացումը Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյանը ներկայացրեց նիստի նպատակը և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Դիմորդների շրջանում մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ միջոցառումների կազմակերպման մասին:
2. ԳՊՀ ուսանողների շրջանում «Ինչպես գրել գիտական հոդված» թեմայով սեմինարների կազմակերպման մասին:
3. «Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից ԳՊՀ ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթի» քննարկման մասին:

/Զեկ՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան/

1. Լսեցին - Զեկուցողը նշեց, որ կրթության որակի շարունակական բարելավման կարևոր նախապայմաններից է դիմորդների մասնագիտական կողմնորոշվածության բարձրացումը, ԳՊՀ ուսանողների գիտահետազոտական կարողությունների զարգացումը և ակադեմիական մշակույթի ձևավորումը:

Անդրադառնալով առաջին ենթակետին՝ Ք. Հայրապետյանը ներկայացրեց «Մասնագիտական կողմնորոշում» թեմայով միջոցառման կազմակերպման առաջարկը: Նշվեց, որ հանդիպման ընթացքում Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցներիշրջանավարտները հնարավորություն կունենան ծանոթանալու ԳՊՀ մասնագիտիությունների, միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերին:

2. Լսեցին - Օրակարգի երկրորդ հարցի շրջանակում ներկայացվեց «Ինչպես գրել գիտական հոդված» թեմայով սեմինարի կազմակերպման առաջարկը: Զեկուցողը կարևորեց ուսանողների գիտական գրագիտության և հետազոտական հմտությունների զարգացումը՝ ընդգծելով, որ նման սեմինարը կօգնի ուսանողներին

ծանոթանալ գիտական աշխատանքի կառուցվածքին, գիտական աղբյուրների օգտագործման կանոններին, հղումների ձևակերպմանը, ակադեմիական բարեվարքության սկզբունքներին և գիտական հրապարակումների պատրաստման գործընթացին:

Արտահայտվեցին - Քննարկվեց նաև ուսանողների շրջանում հետազոտական գործունեության ակտիվացման հարցը: Մասնակիցները հանդես եկան տարբեր առաջարկություններով, մասնավորապես՝

1. ուսանողական գիտաժողովների և կլոր սեղանների պարբերական կազմակերպում,
2. ուսանողական գիտական խմբակների գործունեության ակտիվացում,
3. գիտական հոդվածների մրցույթների անցկացում,
4. երիտասարդ հետազոտողների խրախուսման մեխանիզմների ներդրում,
5. դասախոս-ուսանող համատեղ հետազոտությունների խթանում,
6. գիտական արդյունքների հանրայնացման հնարավորությունների ընդլայնում:

Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ հետազոտական գործունեությունը նպաստում է ուսանողների վերլուծական մտածողության, ինքնուրույն աշխատանքի և մասնագիտական կարողությունների զարգացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Կազմակերպել «Մասնագիտական կողմնորոշում» թեմայով հանդիպումներ դիմորդների հետ՝ ներգրավելով համապատասխան ոլորտների մասնագետների և գործատուների ներկայացուցիչների:
2. Կազմակերպել «Ինչպես գրել գիտական հոդված» թեմայով սեմինար՝ ուսանողների գիտահետազոտական կարողությունների զարգացման նպատակով:
3. Աջակցել ուսանողական գիտական նախաձեռնություններին և մշակել հետազոտական գործունեության խթանման լրացուցիչ մեխանիզմներ:
4. Խրախուսել ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին, հետազոտական ծրագրերին և գիտական հրապարակումներին:

3. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց «Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից ԳՊՀ ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթ»-ը:

Զեկուցողը նշեց, որ հարցաթերթի հիմնական նպատակն է պարզել ուսանողների կարծիքը հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության, գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության մակարդակի, ինչպես նաև համալսարանի կողմից ստեղծված հնարավորությունների վերաբերյալ:

Ներկայացվեց հարցաթերթի կառուցվածքը, որն ընդգրկում է հարցեր հետևյալ ուղղություններով.

1. ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական ծրագրերին,
2. դասավանդման ընթացքում հետազոտական բաղադրիչների կիրառումը,
3. գիտական ղեկավարության արդյունավետությունը,
4. գիտաժողովներին և սեմինարներին մասնակցության հնարավորությունները,
5. -հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը,
6. ուսանողների բավարարվածության ընդհանուր մակարդակը:

Արտահայտվեցին - Քննարկման ընթացքում մասնակիցները կարևորեցին նման հարցումների անցկացումը՝ որպես հետազոտական գործունեության արդյունավետության գնահատման և բարելավման գործիք: Նշվեց, որ ստացված արդյունքները հնարավորություն կտան բացահայտել առկա խնդիրները, մշակել բարելավման ծրագրեր և առավել արդյունավետ կազմակերպել ուսանողների գիտահետազոտական գործունեությունը:

Մասնակիցները դրական գնահատեցին հարցաթերթի բովանդակությունը և առաջարկեցին հետագայում այն պարբերաբար վերանայել՝ հաշվի առնելով ուսանողների առաջարկությունները և կրթական միջավայրի փոփոխությունները:

Որոշեցին

1. «Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից ԳՊՀ ուսանողների բավարարվածության

գնահատման հարցաթերթ»-ը հաստատել և ապահովել հարցաթերթի կիրառումը սահմանված ժամկետներում:

Նախագահ՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Լ. Մանուկյան**

Գավառի պետական համալսարանի

2026 թվականի մայիսի 17-ին կայացած ուսանողական խորհրդի նիստի

թիվ 6 արձանագրություն

Նախքան խորհրդի նիստի բացումը Ուսանողական խորհրդի նախագահ Լ. Մանուկյանը ներկայացրեց նիստի նպատակը և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. «Ուսանողական գավաթ» ամենամյա մրցույթի անցկացման մասին:

/զեկ. ԲՏՖ ՈՒԽ փոխնախագահ Մ. Գևորգյան /

2. Տարեվերջյան մշակութային-ուսուցողական էքսկուրսիայի կազմակերպման մասին:

/զեկ. ՈՒԽ նախագահ Լ. Մանուկյան /

3. 2025-2026 ուստարվա ծրագրերի ամփոփում:

/զեկ. ՈՒԽ նախագահ Լ. Մանուկյան /

1. Լսեցին - Մ. Գևորգյանը ներկայացրեց Ուսանողական գավաթ ամենամյա մրցույթի անցկացման ժամանակացույցի փոփոխությունը՝ կապված քննաշրջանի հետ համընկնելուն, նպատակները, մրցույթի ձևաչափն ու կազմակերպչական աշխատանքների հիմնական ուղղությունները:

Արտահայտվեցին - Լ. Մանուկյանը կարևորեց «Ուսանողական գավաթ» ամենամյա մրցույթի շարունակական անցկացումը՝ նշելով, որ այն նպաստում է ուսանողների ակտիվության, թիմային աշխատանքի և միջֆակուլտետային համագործակցության զարգացմանը:

Անդամները առաջարկեցին մրցույթը տեղափոխել 2026-2027 ուսումնական տարվա սկիզբ՝ ապահովելու ուսանողների առավել լայն մասնակցությունը և մրցույթի պատշաճ կազմակերպումը:

Որոշեցին

1. Անցկացնել Ուսանողական գավաթ ամենամյա մրցույթը 2026-2027 ուստարվա սկզբում:
2. Ձևավորել կազմակերպչական խումբ՝ մրցույթի նախապատրաստական և ընթացիկ աշխատանքներն իրականացնելու համար:
3. Ապահովել ֆակուլտետների ուսանողների ակտիվ մասնակցությունը:
4. Հաստատել մրցույթի կանոնակարգն ու գնահատման չափանիշները:

2. Լսեցին - Լ. Մանուկյանը ներկայացրեց տարեվերջյան մշակութային-ուսուցողական էքսկուրսիայի կազմակերպման առաջարկը, հնարավոր ուղղությունները և մասնակցության պայմանները:

Արտահայտվեցին - Խորհրդի անդամները կարևորեցին տարեվերջյան մշակութային-ուսուցողական էքսկուրսիայի անցկացումը՝ այն դիտարկելով որպես ուսանողների խրախուսման, թիմային համախմբման և մշակութային գիտելիքների ընդլայնման արդյունավետ միջոց:

Առաջարկվեց նախապատվությունը տալ այն ուղղություններին, որոնք համատեղում են կրթական, հայրենասիրական և ճանաչողական բաղադրիչները:

Որոշեցին

1. Տարեվերջյան մշակութային-ուսուցողական էքսկուրսիայի կազմակերպման համար դիմել ԳՊՀ ռեկտորատին:
2. Էքսկուրսիային ներգրավել ուսխորհրդի կազմում 2025-2026 ուստարում ակտիվ գործունեություն ծավալած ուսանողներին;
3. Հստակեցնել երթուղին, անցկացման ժամկետը և մասնակիցների կազմը:

3. Լսեցին - Լ. Մանուկյանը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված ծրագրերը, ձեռքբերումները և կատարված աշխատանքների արդյունքները:

Արտահայտվեցին - Խորհրդի անդամները բարձր գնահատեցին 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքները՝ ընդգծելով կազմակերպված միջոցառումների արդյունավետությունը և ուսանողների ակտիվ ներգրավվածությունը:

Առաջարկվեց հաջորդ ուսումնական տարվա ծրագրերը մշակել՝ հաշվի առնելով իրականացված նախաձեռնությունների արդյունքները, ուսանողների առաջարկներն ու համալսարանական կյանքի զարգացման առաջնահերթությունները:

Որոշեցին

1. Ի գիտություն ընդունել 2025-2026 ուսումնական տարվա ծրագրերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը:
2. Հանձնարարել հաջորդ ուսումնական տարվա համար մշակել նոր ծրագրեր և նախաձեռնություններ՝ հիմնվելով ձեռք բերված փորձի վրա:

Նախագահ՝ Լ. Մանուկյան

Քարտուղար՝ Լ. Ավետիսյան